# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 38 - 39 (16336) ՇԱԲԱԹ, 6 ՀՈՒՆԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՏՐԻ


ԳՈՐԾԱԴԻՐ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

### ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՉԻՐԱՑԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՉԵՆ ՍՏԱՆԱ



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, հունիսի 4-ին տեղի ունեցավ երկրի կառավարության հերթական նիստը, որի օրակարգում պետբյուջեի ճշգրտման հարցն էր:*

Նիստում վարչապետը ֆինանսների նախարար Նոդար Խադուրուն հանձնարարեց մինչեւ հունիսի 10-ը կառավարությանը ներկայացնել ճշգրտված բյուջեի տարբերակը: «Դուք կարճ ժամանակահատվածում, առավելագույնս մինչեւ հունիսի 10-ը, պետք է ներկայացնեք ճշգրտված բյուջեի տարբերակը: Մենք պետք է հաշվի առնենք իրական վիճակը: Նախարարությունները գումարներ են պահանջում, սակայն նրանք պետք է ծախսեն այն, ինչ ունեն: Տնտեսական զարգացման տեմպերի վերանայումն իրակա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԷՍՏՈՆԻԱ

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՆ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑՆ ԷՐ

*Հունիսի 2-3-ին, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Էստոնիայի նախագահ Թոոմաս Հենդրիկ Իլվեսը:*



Այցի շրանակներում՝ հյուրը հանդիպումներ ունեցավ իր վրաց գործընկերոջ՝ Գիորգի Մարգվելաշվգիլու, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հետ:

Հանդիպումներում քննարկվեցին Վրաստանի եվրաինտեգրման գործընթացին, տարածաշրջանային եւ տրանսատլանտյան անվտանգության, վրաց-էստոնական համագործակցության հետ առնչվող հարցեր: Առանձնակի ընդգծվեց պաշտպանության, մշակույթի, կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում վրաց-էստոնական համագործակցության վերջին տարիների առաջընթացը:

Այցի շրջանակներում՝ Էստոնիայի նախագահ Թոոմաս Հենդրիկ Իլվեսը այցելեց Վրաստանի Ատլանտյան խորհուրդ, որտեղ հանդես եկավ դասախոսությամբ:

Էստոնիայի նախագահն այցելեց նաեւ Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցեց զոհվածների հիշատակին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## ԿԱՐԵՎՈՐՎԵՑԻՆ ՏԱՐԱԴՐԱՄԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԱՐՑԵՐԸ




*Պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության նախագահ Մարկ Գրիֆիտը: Նա, հիմնադրամի Վրաստանում գործող հիմնական ներկայացուցիչ Ազիմ Սադիկովի հետ, հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլու եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ:*

Հանդիպումներում քննարկվեցին Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վրաստանում իրականացված գործունեությունը, երկրի առջեւ ծառացած տնտեսական մարտահրավերները, ինչպես նաեւ տարադրամային ճգնաժամի ու տնտեսական աճի հետ առնչվող հարցերը:

Կողմերն ընդգծեցին Վրաստանի Ազգային բանկի անկախության պահպանման կարեւորությունը:

Կողմերը նշեցին, որ ազգային տարադրամի փոխարժեքի վրա որպես արտաքին գործոն ազդեցություն ունեցան տարածաշրջանում ծավալվող իրադարձությունները: Վրացական կողմը հիմնադրամի ներկայացուցիչներին ներկայացրեց արտահանման դինամիկայի մեծացման, գյուղատնտեսությունում, զբոսաշրջության ոլորտում առկա դրական փոփոխությունների մասին: Ընդգծվեց օտարերկրյա ներդրումների գրավման ուղղությամբ իրականացվող աշխատանքի կարեւորությունը:

Իր հերթին, Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավար Մարկ Գրիֆիտը վրացական կողմին տեղեկություն հաղորդեց Վրաստանում կատարած հանդիպումների վերաբերյալ:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԱՄԵՆԱՄՅԱ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆ ԱՃՈՒՄ Է

*Վրաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցությունը խորանում է:*



Այդ մասին Վրաստան-Եվրամիություն ասոցիացիայի հարցերով կոմիտեի անդրանիկ նիստում հայտարարեց Ռուսաստանի, Արեւելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի, տարածաշրջանային համագործակցության եւ ԵԱՀԿ եվրոպական ծառայության արտաքին գործողությունների դեպարտամենտի տնօրեն Գունար Վիգանդը:

Նրա խոսքերով, եվրամիությունը 65 100 միլիոն եվրոյի է հասցրել Վրաստանին հատկացվող ամենամյա օգնությունը: Մենք քննարկեցինք այն առաջընթացը, որը Վրաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐԴԱՏՈՆ

## ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԻՐՈՎ ԼԵՑՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ




*Միջին եւ ավագ սերնդի վիրահայերի, եւ ոչ միայն նրանց, շարքերում դժվար գտնվի մեկը, ով չիմանա Սայաթ-Նովային նվիրված «Վարդատոնի» օրը՝ Մայիսի վերջին կիրակին: Անտեսելով ամեն կարգի հոգս ու խնդիր՝ նա այդ օրը շտապում է՝ մասնակցելու միջնադարի մեծ քնարերգուի հիշատակը մեծարող համընդհանուր տոնախմբությանը...*

101-րդ «Վարդատոնը» նորից միավորեց բազմազգ Թբիլիսին: Մայիսի 31-ին, Վախթանգ Գորգասալու հրապարակը, հնաշունչ «Մեյդանը», ուր իր ոտնահետքերն է թողել հանճարեղ Աշուղն ու Բանաստեղծը, իր շուրջն էր հավաքել նաեւ երկրի շրջաններից, գյուղերից ու քաղաքներից, Հայաստանից, Ռուսաստանից եկած բոլոր նրանց, ովքեր անտարբեր չեն Մեծն Սայաթ-Նովային: Ովքեր եկել էին վայելելու համամարդկային սիրով լեցուն մի արվեստ, որ կոչվում է Սայաթնովյան երգ ու տաղ: եկել էին՝ երախտիքի օրհնությամբ մեկ անգամ էլ հիշելու հայ գրական անդաստանի վեհաշունչ կաղնուն՝ «Վարդատոնի» հիմնադիր Հովհաննես Թումանյանին, նրա աջակիցներ, գեղանկարիչ Գեւորգ Բաշինջաղյանին, բանաստեղծներ Իոսեբ Գրիշաշվիլուն, Դավիթ Իմեդաշվիլուն...

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԵԱՀԿ

## ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԻՆ

*Պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԵԱՀԿ գործող նախագահ, Սերբիայի ԱԳ նախարար Իվիցա Դաչիչը: Այցի շրջանակներում, նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ:*

ԵԱՀԿ գործող նախագահի հետ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպմանը քննարկվեցին երկկողմ համագործակցության խորացման, Վրաստանի բռնա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԴԵԼՏԱ» ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

*Հունիսի 4-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին այցելեցին «Դելտա» պետական ռազմագիտական տեխնիկական կենտրոն:*



Կենտրոնի ղեկավար Ուչա Ջոծուաշվիլին վարչապետին ծանոթացրեց կենտրոնի կողմից թողարկվող արտադրանքին: Հյուրերը դիտեցին արտադրական գործընթացը:

Վարչապետի եւ պաշտպանության նախարարության հետ միասին կենտրոնում էին գտնվում էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն եւ փախստականների հարցերով նախարար Սոզար Սուբարին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ»



Հունիսի 4-ին, կառավարության նիստի ավարտից հետո, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հայտարարեց, որ գործադիրը մտադիր է ազատականացնել հարկային համակարգը, ինչը զգալիորեն կամրացնի ազգային տարադրամն ու կբարձրացնի գործարար ակտիվությունը: Նոդար Խադուրու խոսքերով, ներկայումս քննարկվում են հարկային համակարգի ազատականացման մի քանի տարբերակներ: Նախարարի հավաստմամբ, այն կներկայացվի սեպտեմբերի սկզբներին:

Ֆինանսների նախարարն անդրադարձավ նաեւ կառավարության կողմից ստանձնած սոցիալական պարտավորություններին եւ հավաստեց, որ դրանք կկատարվեն:

ՎՐԱՍՏԱՆ-ԵԱՀԿ

# ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԻՆ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

զավթված տարածքներում ստեղծված իրավիճակին առնչվող հարցեր:

Վրաստանի վարչապետը Իվիցա Դաչիչի հետ հանդիպմանը մտահոգություն հայտնեց Սուխումիի եւ Ցխինվալիի հետ Մոսկվայի ստորագրած համաձայնագրերի կապակցությամբ: Վրաստանի կառավարության ղեկավարի խոսքով, ԵԱՀԿ-ն պետք է ակտիվ ու դրական գործառույթ կատարի հակամարտության կարգավորման հարցում: Իր հերթին, ԵԱՀԿ-ի գործող նախագահը մեկ անգամ եւս արձանագրեց, որ պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Իվիցա Դաչիչի խոսքով, ԵԱՀԿ-ն ապագայում էլ գործուն քայլեր կձեռնարկի Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու համար: Հանդիպմանը կողմերը քննարկել են Վրաստանի եւ ԵԱՀԿ-ի համագործակցությունը եւ Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի իրադրությունը:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԱՄԵՆԱՄՅԱ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆ ԱՃՈՒՄ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանը ձեռք է բերել այցեգրային պայմանակարգի ազատականացման ուղղությամբ: Դա արտացոլվել է նաեւ մայիսյան հաշվետվության մեջ: Այսօր մենք քննարկեցինք կատարման համար պարտադիր մի շարք հանձնարարականները, որոնց կատարումը թույլ կտա հաստատել անայցեգրային պայմանակարգ»,- հայտարարեց Վիգանդը եւ հավելեց, որ Եվրամիության կառույցների հետ Վրաստանի համագործակցությունը խորանում է: Մասնավորապես, Վրաստանը միանում է Եվրամիության երիտասարդական հետազոտական «Հորիզոն-220» ծրագրին, վրացական ոստիկանությունը բանակցություններ է վարում եվրոպոլի հետ: «Նախորդ տարիներին Վրաստանին ցուցաբերող օգնությունը կազմում էր 65 միլիոն եվրո, ներկայումս այն կհասցվի 100 միլիոնի: Մշակման փուլում են դատարանների եւ արդարադատության օգնության ծրագրերը: Մշակում ենք նաեւ փոքր ձեռներեցության օգնության ծրագիրը, ինչը վերջիններիս թույլ կտա մուտք գործել եվրոպական շուկա: Հաջորդ ծրագիրը նախատեսում է աջակցություն գյուղատնտեսության ոլորտին: Վերոնշյալ ծրագրերից յուրաքանչյուրը կազմում է 50 միլիոն եվրո»,- հայտարարեց Գունար Վիգանդը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

# ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՄՈՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԼՅԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿԱՅՑԵԼԻ ՎՐԱՍՏԱՆ»

*Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին աշխատանքային այցով գտնվում էր Բրյուսելում: Նա պաշտպանության նախարարի կարգավիճակով առաջին անգամ հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:*



Հանդիպմանը կողմերը քննարկեցին Ուելսի գագաթաժողովում Վրաստանի համար սահմանված էական փաթեթով նախատեսված Վրաստան-ՆԱՏՕ հարաբերություններին առնչվող հարցերը: Քննարկման թեմա էր նաեւ 2016 թվականին Վարշավայում անցկացվելիք գագաթաժողովը: Վրացական կողմը բարձրացրեց այդ գագաթաժողովում Վրաստանի անդամակցության գործողության ծրագրի հանձնման հարցը: Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանում ՆԱՏՕ-ի համատեղ զորավարժությունների եւ գնահատումների կենտրոնի բացման հարցին: Ինչպես նշեց Թինա Խիդաշելին, ալյանսի գլխավոր քարտուղարը խոստացել է մոտ ժամանակներս այցելել Վրաստան եւ մասնակցել կենտրոնի բացմանը:

Բրյուսել կատարած այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հանդիպում ունեցավ նաեւ ալյանսի ռազմական կոմիտեի ղեկավար, գեներալ Կնուտ Բարտելսոնի հետ: Կողմերը քննարկեցին Վրաստան-ՆԱՏՕ էական փաթեթով նախատեսված միջոցառումների իրականացման հարցը:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

# ԱԲԽԱԶԻԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ «C» ՀԵՊԱՏԻՏԻ ԱՆՎՃԱՐ ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ




*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, դիտելով Զուգդիդիի շրջանի Ռուխի գյուղում կառուցվող արդի տեխնոլոգիաներով հագեցված բազմաճյուղ հիվանդանոցի շինարարության ընթացքը, հայտարարեց, որ Վրաստանի իշխանությունները հնարավոր ամեն ինչ կանեն աբխազ եղբայրներին ու քույրերին «C» հեպատիտի բուժման պայմաններ ստեղծելու համար:*

Վրաստանի կառավարության տեղեկատվությամբ, Զուգդիդիում կբացվի բժշկական կետ, որտեղ «C» հեպատիտով հիվանդներն անվճար կստանան անհրաժեշտ դեղորայք:

«Առողջապահության նախարարությունն իրականացնում է «C» հեպատիտի բուժման աննախադեպ ծրագիր: Միացյալ Նահանգների առողջապահության գործակալությունը վերջին տարվա ընթացքում մեզ փոխանցել է 2 միլիարդ դոլարի դեղորայք, եւ մենք սկսել ենք բնակչության անվճար բուժումը: Զուգդիդիում ծրագրվում է բացել բժշկական կետ, որտեղ կբաժանեն դեղորայքը եւ աբխազ եղբայրների ու քույրերի համար, ովքեր կցանկանան բուժվել, կստեղծվեն պայմաններ, որպեսզի այդ ամենը նրանց համար լինի մատչելի»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, հիվանդանոցի շինարարությունն իրականացվում է արագ տեմպերով եւ, ներկա դրությամբ, այն 70 տոկոսով արդեն ավարտվել է: Արդի սարքավորումներով եւ համապատասխան բարձրագույն չափորոշիչներով հագեցված հիվանդանոցը կսպասարկի ոչ միայն Սամեգրելոյի բնակչությանը, այլեւ մենք անվճար բուժում ենք առաջարկում նաեւ մեր աբխազ եղբայրներին: Նաեւ իմ նախաձեռնությամբ կկառուցվի բազմագործառույթային առեւտրական համալիր, որից կարող են օգտվել ինչպես տեղի բնակիչները, այնպես էլ՝ աբխազները: Կարեւոր նշանակություն ունի մեր միջեւ վստահության վերականգնման գործընթացի արագացումը եւ այդ հարաբերությունները մեծ դեր կկատարեն»,- հայտարարեց վարչապետը:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՕԴԵՍԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

*Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն Օդեսայի տարածաշրջանային պետական վարչակարգի ղեկավար նշանակելու հրամանագիր է ստորագրել:*

Մինչ այդ, մայիսի 30-ին Վրաստանի նախկին նախագահը Ուկրաինայի քաղաքացիություն է ստացել: Հիշեցնենք, որ մինչեւ վերոնշյալ նշանակումը, Միխեիլ Սաակաշվիլին գլխավորում էր Ուկրաինայի նախագահին կից բարեփոխումների միջազգային խորհուրդը:

Վրացական օրենքների համաձայն, այլ երկրի քաղաքացիություն ստանալու դեպքում անձը մեխանիկորեն կորցնում է Վրաստանի քաղաքացի լինելու իրավունքը: Սրա հետ մեկտեղ, Վրաստանը թույլատրում է երկքաղաքացիություն. երկրորդի՝ Վրաստանի քաղաքացիություն ստանալու համար անձը պետք է դիմի նախագահին:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին բացասական գնահատեց Սաակաշվիլու՝ Օդեսայի նահանգապետի պաշտոնում նշանակվելու փաստը եւ հայտարարեց, որ կորցնելով վրացական քաղաքացիությունը՝ նախկին նախագահն անարգել է իր երկիրն ու նախագահի ինստիտուտը:

«Իմ կարծիքով, արժեքներն ավելի թանկ են մասնագիտական գործունեությունից: Եվ այդ արժեքներն այս դեպքում Վրաստանի քաղաքացիությունն է: Ինձ համար անհասկանալի է նրա անհարգալից վարքը»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նա վերստին հայտարարել է, որ մտադիր է վերադառնալ Վրաստան եւ մասնակցել երկրի քաղաքական գործընթացներին: Սաակաշվիլին այն կարծիքին է, որ Վրաստանի քաղաքացիության կորուստն իրեն չի խանգարի ապագայում վերադառնալ հայրենիք:

«Եթե Վրաստանի ներկայիս նախագահը որոշում ընդունի ինձ երկրի քաղաքացիությունից զրկելու մասին, դա ինձ չի խանգարի ապագայում վերադառնալ հայրենիք, քանի որ նախքան իմ ժամանումը, Վրաստանում ժողովուրդն ինքը որոշում կընդունի ինձ քաղաքացիությունից զրկելը չեղյալ հայտարարելու եւ իմ նկատմամբ քրեական գործերը դադարեցնելու մասին»,- համոզված է նախկին նախագահը:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՑՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ

*2015 թվականից Վրաստանում համանման վերգետնյա հեռարձակումը կփոխարինվի թվային հեռարձակումով:*




## ԻՆՉՊԻՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

** Զգալիորեն կբարելավվի ձայնի եւ պատկերի որակը:*

** Կաճի հեռարձակողների քանակը եւ մեդիա շուկայում կստեղծվի մրցունակ միջավայր:*

** Սահմանափակ ունակություններ ունեցող անձանց համար հնարավոր կլինի օգտագործել աուդիո-մատչելի պատկերներ եւ ենթագրեր:*

## ՈՒՄ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ

*Բարեփոխումը վերաբերում է հավասարապես բոլոր ընտանիքներին, բացառությամբ նրանց, ովքեր կաբելային, արբանյակային եւ ինտերնետ-հեռուստատեսության սպառողներ են համարվում:*

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ

** Նրանց համար, ովքեր ցանկանում են գնել ժամանակակից հեռուստացույց, որի գործառույթները համապատասխանում են Վրաստանի թվային հեռուստատեսությունների համար սահմանված տեխնիկական պահանջների փաստաթղթերին, անհրաժեշտ է միայն փոխել պարամետրերը:*

** Հեռուստացույց փոխելու անհրաժեշտություն կունենան միայն այն անձինք, ում հեռուստացույցը չի կարող միանալ RCA տիպի կաբելին:*

** Ընտանիքները, ովքեր ունեն միայն համանման ազդանշան ընդունող հեռուստացույցներ, նրանց անհրաժեշտ է գնել թվային ազդանշան ընդունող «Սեթ-թոփ բոքսիս» սարքավորում:*

** «Սեթ-թոփ բոքսիս»-ը հատուկ սարքավորում է, որը ալեհավաքից ընդունված ստանդարտ կամ բարձր պարզության ազդանշանը հաղորդում է հեռուստացույցերին:*

** Ալեհավաք*

*Թվային հեռուստատեսության ազդանշանը կարելի է ընդունել նույն ալեհավաքով, ինչպես օգտվում էինք համանման ազդանշան ընդունելիս: Այն կարող է լինել շենքի տանիքին մոնտաժված հեռուստատեսության ալեհավաք՝ ուղղորդված դեպի հաղորդիչը (դեպի հեռուստաաշտարակը): Երբեմն կարելի է օգտվել նաեւ տան ալեհավաքով:*

** Կաբել (մալուխ)*

*Անտեննային «Սեթ-թոփ բոքս»-ին միանալու համար անհրաժեշտ է կոաքսիալ (պղնձե) կաբել: «Սեթ-թոփ բոքս»-ի միացումը հեռուստացույցին հնարավոր է միայն RCA կամ HDMI միացնող կաբելի օգնությամբ:*

## ՈՐՏԵՂ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ «ՍԵԹ-ԹՈՓ ԲՈՔՍ» ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

*«Սեթ-թոփ բոքս»-ը կարելի է գնել սպառողական տեխնիկայի խանութներում:*

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

*Սոցիալապես անապահով ընտանիքների համար, ում վարկանիշային միավորը 70 000 է եւ պակաս, պետությունը կաջակցի գնել սերտիֆիկացված «Սեթ-թոփ բոքս»-եր եւ Վրաստանի փոստի օգնությամբ կբաժանի տարածաշրջանային սպասարկման կենտրոններում:*

*Սահմանափակ ունակություններ ունեցող մարդկանց ընտանիքներին պետությունը ապահովում է «Սեթ-թոփ բոքս»-ը բնակության վայր առաքելուն:*

**Հասցե. Թբիլիսի 0114, Ֆունիկյուորի վերին պլատո**

**Թեժ գիծ՝ 1480**

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

*Մայիսի 31-ին Վրաստանը նշեց ոստիկանության օրը: Տոնական միջոցառումներն անցկացվեցին Քութայիսիում:*



Միջոցառումներին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության եւ օրենսդիր մարմնի անդամները, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ գործընկեր երկրներից ժամանած պաշտոնական պատվիրակությունների անդամները Հայաստանից, Լիտվայից, Լատվիայից, Գերմանիայից, Բելառուսից, Թուրքիայից եւ Մոլդովայից:

Հանդիսավոր միջոցառումն սկսվեց իրենց ծառայական պարտականությունների ժամանակ զոհված ոստիկանների՝ հարգանքի մեկ րոպե լռությամբ:

Քութայիսիի կենտրոնական հրապարակում տեղի ունեցած հանդիսավոր միջոցառմանը ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ Վրաստանի ՆԳ նախարար Վախթանգ Գոմելաուրին:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

## «ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՅԺԵՔԱՐՏ




*Թբիլիսիում անցավ «Բաց կառավարման գործընկերություն» տարածաշրջանային խորհրդաժողովը: Խորհրդաժողովի բացմանը ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:*

Նա խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացրեց երկրում իրականացվող բարեփոխումները: Վարչապետի խոսքերով, տարածաշրջանային խորհրդաժողովը վիթխարի նշանակություն ունի: «Դա շատ ավելին է, քան գաղափարը կամ նախաձեռնությունը: Ակնհայտ է, որ ժողովրդավարության ինստիտուտների հաստատման համար դրանց փոփոխումը բավական չէ, անհրաժեշտ է փոխել ինստիտուցիոնալ կուլտուրան: Հենց կառավարման կուլտուրայի փոփոխությունում է բաց կառավարման սկզբունքների հիմնումը, որն էլ խթանում ու իրականացնում է բարեփոխումները: Մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ «Բաց կառավարման գործընկերությունը դարձել է մեր բարեփոխումների այցեքարտը»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, իր ելույթում կարեւորեց կառավարման համակարգի թափանցիկության ապահովմանն ուղղված քայլերը, նշելով, որ բաց կառավարման հաստատման կարեւորագույն նախադրյալը հստակ վերահսկողությունն է եւ դա անվերապահորեն իրականացվելու է:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## 50 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ

*Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերի պետնախարար Դավիթ Բաքրաձեն եւ Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը Թբիլիսիում ստորագրեցին ֆինանսական համաձայնագիր, ըստ որի՝ ԵՄ-ն 50 մլն եվրո կհատկացնի երկրի արդարադատության համակարգի բարենորոգմանը:*

«Արդարադատության համակարգի բարեփոխումները» բյուջետային օգնության նոր ծրագրի նպատակը արդարադատության արդյունավետ ու անկողմնակալ համակարգի մատչելիության ապահովումն է, արդար դատի իրավունքի ուժեղացումը, քրեական արդարադատության արդյունավետության ուժեղացումը, մասնավոր ու վարչական իրավունքների համակարգերի բարելավումը, օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների պաշտպանությունը եվրոպական պրակտիկային ու միջազգային չափորոշիչներին համապատասխան: Ծրագրի շրջանակներում, ուշադրություն է դարձվելու գենդերային իրավահավասարության պաշտպանությանն ու կայուն զարգացմանը»,- համաձայնագրի ստորագրումից հետո հայտարարեց Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերի պետնախարար Դավիթ Բաքրաձեն:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՎԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐՑՈՎ

*Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր ասամբլեան բանաձեւ ընդունեց «Աբխազիայից եւ Ցխինվալիի տարածաշրջան-Հարավային Օսեթիայից (Վրաստան) բռնագաղթված անձանց եւ փախստականների կարգավիճակի վերաբերյալ»:*

Ինչպես նշեց Վրաստանի ԱԳ առաջին փոխնախարար Դավիթ Դոնդուան, ՄԱԿ-ի բանաձեւի կողմ է քվեարկել 75 պետություն, ինչը, նախորդ տարվա համեմատությամբ, 6-ով գերազանցում է: «Բանաձեւի աջակցության տեսանկյունից դրական դինամիկան վկայում է, որ միջազգային հանրությունն առավել հստակորեն է ընկալում Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց հիմնարար իրավունքների իրականացման նշանակությունը: Վրաստանի կառավարությունը երախտագիտություն է հայտնում բոլոր այն պետություններին, ովքեր պաշտպանեցին բանաձեւը եւ դրանով աջակցություն ցուցաբերեցին յուրաքանչյուր բռնագաղթվածին: Սա վրաց դիվանագիտության մեծ նվաճումն է»,- հայտարարեց առաջին փոխնախարարը:

Նրա խոսքերով, Ռուսաստանը կրկին փորձեց հարցը քաղաքականացնել, թեպետ համաշխարհային հանրությունը հայտարարեց, որ դա մարդասիրական հիմնախնդիր է:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԲԽԱԶԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ ՉԻ ԴՐՎԱԾ



*Վրաստանի կառավարությունը մինչեւ հարցերի քաղաքական լուծումը մտադիր չէ քննարկելու Աբխազիայով երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցը: Այդ մասին հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:*

Նրա խոսքերով, այդ թեմայով բանակցություններ չեն տարվում եւ չեն էլ տարվի, քանի դեռ չի կարգավորվել քաղաքական հարցն ու Աբխազիայի կարգավիճակը:

Հիշեցնենք, որ Վրաստանում իշխանափոխությունից հետո Աբխազիայով երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցը ձեռք բերեց հրատապություն: Մասնավորապես, նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին բազմիցս հայտարարել էր, որ երկաթուղու աբխազական հատվածի վերականգնումը լրիվությամբ կախված է Ռուսաստանի դիրքորոշումից: Չնայած նրան, որ սույն թեման ժամանակ առ ժամանակ բարձրացվում էր տարբեր մակարդակներով, այդ հարցով կոնկրետ բանակցություններ չսկսվեցին:

Այն մասին, որ վրացական կողմը մտադիր չէ քննարկել աբխազական երկաթուղու վերականգնման հարցը, հաստատեց նաեւ Ռուսաստանի հետ հարաբերություններում վարչապետի ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն: «Երկաթուղու հարցով էական քննարկում չի եղել, այնպես որ, այդ թեմայով դժվար է մեկնաբանություն անել: Մեր կարծիքով, դա վրաց-ռուսական երկաթուղի է եւ, եթե հարկ է այն վերականգնել, նախ պետք է կարգավորվեն քաղաքական հարցերը, քանզի դա միայն ենթակառույցների վերականգնման հարցը չէ»,- հայտարարեց Աբաշիձեն:



### ՌԻՏԱ ԽԻԴԻՐԲԵԳԱՇՎԻԼԻՆ՝ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ



*Թբիլիսիի սակրեբուլոյի «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» խմբակցությունում ազգային փոքրամասնությունների հարցերի պատասխանատու է նշանակվել Ռիտա Խիդիրբեգաշվիլին:*

*Ինչպես հայտարարեցին սակրեբուլոյում, Ռիտա Խիդիրբեգաշվիլին Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր հանդուրժողականության կենտրոնի փորձագետ է, ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամ եւ ոչ կառավարական «Ինտերնացիոնալ Վրաստանը խաղաղության եւ շրջակա միջավայրի պաշտպանության համար» կազմակերպության նախագահ:*

### ԽՆԴՐԵԼ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՐԱՆ

*2015 թվականի սկզբից Վրաստանում ապաստարան են խնդրել Ռուսաստանի 28 քաղաքացիներ: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվական վերլուծական դեպարտամենտը: 2015 թվականի հունվար-ապրիլ ընկած ժամանակահատվածում Վրաստանի իշխանություններին ապաստարանի խնդրանքով դիմել են Ռուսաստանի 17 տղամարդ եւ 11 կին քաղաքացիներ:*

*Ընդհանուր առմամբ, Վրաստանին ապաստարանի խնդրանքով դիմել են 717 օտարերկրացիներ: Այսպես, Իրաքից ապաստարանի խնդրանքով դիմել են 284 քաղաքացիներ (202 տղամարդ եւ 82 կին), Ուկրաինայից՝ 167 կին եւ 96 տղամարդ, Իրանից՝ 15 տղամարդ եւ 13 կին: Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, ապա Վրաստանում ապաստարանի խնդրանքով դիմել են Հայաստանի 4 եւ Ադրբեջանի 8 քաղաքացիներ: Ապաստարանի խնդրանքով մեկական դիմում է ներկայացվել ԱՄՆ-ից, Կանադայից, Գվինեայից, Լիբանանից, Պակիստանից, Սաուդյան Արաբիայից եւ Թունիսից:*

### ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ԿԵՂԾՎԱԾ ԱՂ

*Ախալքալաքիի եւ Նիրծմինդայի ոստիկանության աշխատակիցներն օպերատիվ հետաքննչական միջոցառումների արդյունքում կեղծման մեղադրանքով ձերբակալել են 1957 թվականին ծնված Մարտին Բ.-ին: Հետաքննությամբ պարզվել է, որ Մարտին Բ.-ն վերջին երկու տարիների ընթացքում իր սեփական տանը մասնավոր կարգով արտադրել է առողջության համար վտանգավոր կեղծված օրգանական աղ եւ այն վաճառել Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում: Ձերբակալվածի տանը խուզարկության ժամանակ առգրավվել է վաճառքի համար նախատեսված 3200 կգ կեղծված աղ:*

### ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է

*Վրաստանի խորհրդարանը համաձայնություն է տվել, որ վրացի զինվորականներ ուղարկվեն Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն եւ Մալի՝ Եվրամիության առաքելություններին մասնակցելու համար:*

*Վրաստանի նախագահի կարգադրության համաձայն, պլանավորվում է հինգ վրացի զինծառայողներ ուղարկել Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն Եվրամիության Զինվորական խորհրդականների առաքելության արագ հակազդման խմբին մասնակցելու համար եւ Վրաստանի զինված ուժերի մեկ զինծառայողի՝ Մալիի Հանրապետությունում Եվրամիության զինվորական վարժանքների առաքելությանը մասնակցելու համար:*

ԳՈՐԾԱԴԻՐ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նացվում է մեր տարածաշրջանի բոլոր երկրներում, իսկ մենք շարունակում ենք մնալ նույն տեղում: Այս տարի Վրաստանում տնտեսական 5 տոկոսի աճ չի լինի: Դա իրականություն է եւ որքան շուտ անցկացնենք բյուջեի ճշգրտումը, այնքան լավ»,- նշեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլին նախարարություններին կոչ արեց յուրացնել հիմնարար ծախսերը: Դիմելով ֆինանսների նախարարին, վարչապետը կոչ արեց դադարեցնել այն շրջանների միջոցների տրամադրումը, որոնք չեն կարողացել իրացնել արդեն իսկ հատկացված գումարները: «Հասկանալի է, որ նախագծման հետ կապված հիմնախնդիրներ կան, սակայն պետք է ելք գտնել: Դա վերաբերում է բացարձակապես բոլոր նախարարություններին»,- հայտարարեց վարչապետը եւ, դիմելով ֆինանսների նախարարին, հավելեց. «Ներկայացրեք մանրամասն տեղեկատվություն, թե որ շրջանները չեն իրականացրել գումարների իրացումը եւ միջոցներ ձեռնարկեք: Լրացուցիչ միջոցներ պետք չէ տրամադրել այն շրջաններին, որոնք չեն կարողանում այն ծախսել: Առանձնակի ուշադրություն դարձրեք հիմնարար ծախսերի վրա»,- հայտարարեց վարչապետը: Նա հիմնարար ծախսերի վերահսկողության համակարգումը հանձնարարեց փոխվարչապետ, Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլուն: «Մենք առանձնակի խստությամբ պետք է վերահսկենք յուրաքանչյուր նախարարության եւ բոլոր շրջանների հիմնարար ծախսերը: Եթե որեւէ շրջան այդ առումով թերացել է, պարզելու ենք պատճառները եւ ընդունել համապատասխան միջոցներ»,- հայտարարեց վարչապետը:



Կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ անդրադառնալով բարձրալեռ շրջանների զարգացման հարցին, նշեց, որ համապատասխան օրինանախագիծն արդեն մշակվել է եւ առաքվել խորհրդարանի քննարկմանը: Վարչապետի խոսքերով, դա շատ կարեւոր հարց է, քանի որ կառավարությունը պարտավոր է շտապ սոցիալական միջոցառումներ իրականացնել բարձրալեռ շրջանների ամրապնդման համար: «Օրինանախագիծը նախատեսում է բարձրալեռ շրջանների բնակիչների համար սոցիալական արտոնությունների եւ տնտեսական գործունեության խրախուսման համակարգերի ներդնում: Այդ տարածաշրջաններում ենթակառույցների զարգացման նպատակով, կհատկացվեն լրացուցիչ միջոցներ»,- հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով արդարության վերականգնման թեմային, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ ինքը ողջունում է դատախազության համակարգում այդ հարցով նոր դեպարտամենտի հիմնումը, որը ներկայումս ակտիվ գործունեություն է ծավալել: «Մենք ներկայումս ձեռնամուխ ենք եղել նախորդ կառավարության օրոք բռնագրավված անշարժ գույքի վերադարձման հարցի քննարկմանը: Բնականաբար, դա չի կարող առնչվել նախորդ իշխանության օրոք տարիների ընթացքում տուժյալ բոլոր մարդկանց, թեպետ գործընթացն սկսվել է եւ նշանակալից է, այն դրական ազդեցություն ունենա տուժյալ բնակիչների համար»,- հայտարարեց վարչապետը:

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

# ՏԱՐԱԿԱՐԾԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

## ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՀԱՄԱԿԱՐԳ. «ԼԻՆԵ՞Լ, ԹԵ՞ ՉԼԻՆԵԼ»

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի սահմանադրական դատարանը հակասահմանադրական էր համարել մեծամասնական ընտրահամակարգի հիմնադրույթը: Սահմանադրական դատարանի որոշումը յուրատեսակ ազդակ հանդիսացավ Վրաստանի ընտրական օրենսգրքի դրույթների քննարկման եւ փոփոխությունների կատարման անհրաժեշտության տեսանկյունից:***

Սույն որոշումը առիթ դարձավ կառավարող կոալիցիայում ընտրական համակարգի բարեփոխումների քննարկման համար: Քննարկումները ցույց տվեցին, որ «Վրացական երազանք» կոալիցիայում այդ հարցով կարծիքներն սկզբունքորեն հակադրվում են:

Ինչպես նշեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Դավիթ Սագանելիձեն, գործող ընտրահամակարգը իրոք պետք է փոխվի: Օրակարգում այդ փոփոխության իրականացման սկզբունքներն են: «Ներկայիս ընտրական համակարգն ինձ համար անընդունելի է: Այն պետք է պարտադիր կարգով փոխվի, որպեսզի ընտրամարզերը հավասարվեն: Դրա համար անհրաժեշտ է խորհրդարանականների 76 ձայն, ուստի հարցի լուծման համար սահմանադրական փոփոխություններ չեն պահանջվում: Ինչ վերաբերում է այն հարցին, թե անհրաժե՞շտ է, արդյոք, համամասնական համակարգ, կամ արդյոք պետք է հրաժարվել մեծամասնական ընտրամարզերից կամ ներդնել տարածաշրջանային համամասնական համակարգ, ապա, այդ հարցերի կարգավորման համար անհրաժեշտ է սահմանադրական փոփոխություններ: Ներկայիս մեծամասնականների թիվը շատ մեծ է: Մյուս կողմից, մեծամասնական պատգամավորների առկայությունն անհրաժեշտություն է»,- հայտարարեց Դավիթ Սագանելիձեն:

Խորհրդարանական մեծամասնության մեջ ընդգրկված «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի պատգամավորների մեծամասնությունը դեռեւս չի ձեւակերպել իր դիրքորոշումը մեծամասնական ընտրահամակարգի վերացման եւ դրա փոխարեն տարածաշրջանային համամասնական համակարգ ներդնելու վերաբերյալ: Ընդ որում, խորհրդարանական մեծամասնության երկու խմբակցությունները կտրականապես դեմ են դրան եւ միայն 9 պատգամավորից բաղկացած հանրապետականների խմբակցությունն է բացահայտորեն պաշտպանում այդ գաղափարը:

Խորհրդարանական մեծամասնությունում միավորված 86 պատգամավորից բաղկացած 7 խմբակցություններից 2-ը, 6-ական պատգամավոր ունեցող «Անկախ մեծամասնականներ-ուժեղ տարածաշրջան» եւ «Անկուսակցական անկախ մեծամասնականներ» խմբակցությունները բացասական վերաբերմունք են ցուցաբերում ներկայումս գործող ընտրահամակարգում մեծամասնական բաղադրիչի վերացման հարցում:

Անկուսակցական անկախ մեծամասնականներ եւ «Անկախ մեծամասնականներ-ուժեղ տարածաշրջաններ» խմբակցությունների ղեկավարներ Կախի Օքրուաշվիլին եւ Գուրամ Միսաբիշվիլին այդ հարցում ձեւակերպեցին իրենց խմբակցությունների դիրքորոշումը: Նրանց հավաստմամբ, այդ հարցում վերոնշյալ երկու խմբակցությունների կարծիքը կմնա անփոփոխ:

Վերոնշյալ հարցի շուրջ հստակ դիրքորոշում չեն ձեւակերպել նաեւ մեծամասնության չորս խմբակցությունները, այդ թվում՝ ամենախոշոր, 47 պատգամավորից բաղկացած «Վրացական երազանք» խմբակցությունը: Այդ հարցով խորհրդատվությունները շարունակվում են:

Ինչպես հայտարարեց «Վրացական երազանք» խմբակցության փոխնախագահ Էլիսո Չափիձեն. «Ներկայումս քննարկվում է, թե ինչ ձեւաչափով է իրականացվելու ընտրական համակարգի փոփոխությունը՝ տարածաշրջանային համամասնական ուղղությամբ, թե մեծամասնական ընտրամարզերի ընտրողների թվի հավասարեցման կողմով, այն հաշվով, որպեսզի մի կողմից խորհրդարանում չվերացվի տարածաշրջանային ներկայացուցչությունը, մյուս կողմից՝ ուժեղացվի կուսակցությունների համամասնական ներկայացուցչությունը»:

«Լրիվությամբ մեծամասնական ընտրակարգի վերացումը բարդ հարց է, քանի որ դա կպահանջի 113 ձայնով սահմանադրական փոփոխություն: Դա դժվար է ապահովել, քանզի մեծամասնականների մեծամասնությունը դրան դեմ է»,- հայտարարեց նա եւ հավելեց, հուսով է, որ կկարողանան մեծամասնությանը համոզել, որպեսզի աջակցեն այս կամ այլ ձեւով մեծամասնական ընտրակարգի փոփոխմանը:

«Վրացական երազանք-պահպանողականներ» վեց պատգամավորից բաղկացած խմբակցության նախագահ Գիգա Բուկիան նշեց, որ պահպանողականներն ունեն իրենց դիրքորոշումը, թեպետ աշխատում են կոալիցիոն աշխատակարգով, եւ իրենք կներկայացնեն կոալիցիայի դիրքորոշմանը համապատասխան դրույթ:

Եվս վեց պատգամավորից բաղկացած «Վրացական երազանք-ազգային ֆորում» խմբակցության նախագահ Մալխազ Վախթանգիշվիլին նշեց, որ թեպետ իրենք միշտ պայքարել են մեծամասնական ընտրահամակարգի դեմ, սակայն, ներկա դրությամբ, այդ հարցում հստակ դիրքորոշում չեն կազմել:

«Չնայած ինքս մեծամասնական պատգամավոր եմ, սակայն գտնում եմ, որ գերադասելի է այն փոխել տարածաշրջանային-համամասնական ընտրակարգով: Սա իմ անձնական կարծիքն է, իսկ խմբակցության դիրքորոշումը հայտնի կդառնա մոտ ժամանակներս»,- հայտարարեց Վախթանգիշվիլին:

Վեց պատգամավոր միավորող «Վրացական երազանք-արդյունաբերողներ» խմբակցության նախագահ Գոգի Թոփաձեն հայտարարեց, որ ինքը համաձայն է այն սկզբունքին, ըստ որի՝ խորհրդարանում յուրաքանչյուր շրջան կամ տարածաշրջան պետք է ունենա ներկայացուցիչ: «Հարկ է գտնել փոխընդունելի որոշում գործող ընտրահամակարգում փոփոխությունների կատարման համար»,- հայտարարեց Գոգի Թոփաձեն:

«Վրացական երազանք-ժողովրդական Վրաստան» կուսակցությունը ներկայացնող, սակայն «Արդյունաբերողների» խմբակցությանն անդամագրված խորհրդարանի ընթացակարգային հարցերի եւ կանոնների կոմիտեի նախագահ Գիորգի Կախիանին նշեց, որ խորհրդարանական մեծամասնության շարքերում շատ են մեծամասնական համակարգի վերացման կողմնակիցները եւ «ելնելով դրանից, անհնար կլինի սահմանադրությունում փոփոխությունների կատարումը»:

Նշենք, որ խորհրդարանին սահմանադրական փոփոխությունների ընդունման պահանջ է ներկայացրել ընդդիմադիր 14 կուսակցություն, այդ թվում՝ 2-ը խորհրդարանական, 8-ը՝ ոչ կառավարական կազմակերպություններ, որոնց ներկայացուցիչները հունիսի 2-ին օրենսդիր մարմնին ներկայացրին համատեղ դիմում՝ անհապաղ սահմանադրական փոփոխությունների իրականացմանը ձեռնամուխ լինելու պահանջով:

Հիշեցնենք, որ ներկայումս Վրաստանում գործում է խառն ընտրական համակարգ, ըստ որի՝ 150 պատգամավորական մանդատից 77-ը համամասնական ընտրակարգով բաշխվում է այն քաղաքական կուսակցությունների միջեւ, որոնք հաղթահարում են ընտրական 5 տոկոսանոց արգելագիծը, իսկ մնացած 73 պատգամավորներն ընտրվում են միամանդատ մարզերում: Մեծամասնական ընտրակարգի ընդդիմախոս խմբակցությունները գտնում են, որ միամանդատ ընտրամարզի առկայությունն ընդունելի է իշխանության գլուխ կանգնած ուժերի համար, քանի որ, որպես օրենք, մեծամասնական ընտրություններում հաղթում են իշխանության թեկնածուները:

Խորհրդարանին ուղղված համատեղ դիմումի հեղինակներն օրենսդիր մարմնին առաջարկում են հետեւյալ տարբերակը. խորհրդարանի 150 պատգամավորից 75-ն ընտրվելու է միասնական համամասնական ընտրակարգով, իսկ մնացած 75-ը՝ երկրամասային համամասնական ընտրակարգով: Վերջինս նախատեսում է տարածաշրջաններում կուսակցությունների համար քվեարկություն, որտեղ տարածաշրջանի համար նախատեսված մանդատները կբաժանվեն համամասնական ընտրակարգով ստացված ձայներին համապատասխան:

Վերոնշյալ փոփոխությունների նախաձեռնման համար պահանջվում է առնվազն 76 պատգամավորի ստորագրություն կամ 200 հազար ընտրողի աջակցություն, որից հետո մեկ ամսվա ընթացքում անցկացվելու է համընդհանուր քննարկման ընթացակարգը: Դրա ավարտից հետո իրար հաջորդող երկու նստաշրջաններում երեք լսումներով օրինանախագիծը պետք է ընդունվի 113 ձայնով:

Խորհրդարանում ընդդիմադիր խմբակցությունները, հանձինս 8 պատգամավոր միավորող «Ազատ ժողովրդավարների» եւ «Ազգային շարժման», որը իշխանության գլուխ գտնվելու ընթացքում կտրականապես դեմ էր մեծամասնական ընտրահամակարգի վերացմանը, ներկայումս հանդես են գալիս այն տարածաշրջանային համամասնական բաղադրիչով՝ փոխարինելու օգտին:

Հիշեցնենք, որ խորհրդարանում փոքրամասնությունը ներկայացնող «Ազգային շարժումը», որը ներկայացված է երեք խմբակցությունով, տնօրինում է 46 ձայն:

«Ազգային շարժում-տարածաշրջաններ» խմբակցության նախագահ, մեծամասնական պատգամավոր Ջուրաբ Չիլինգարաշվիլին հայտարարեց, որ իրենց խմբակցությունը պաշտպանում է մեծամասնական ընտրահամակարգի վերացման գաղափարը: Նրա հետ համամիտ է «Ազգային շարժում-մեծամասնականներ» խմբակցության ղեկավար Ակակի Բոբոխիձեն:

Վերջում ավելացնենք, որ կառավարող կոալիցիան քաղաքական պատրաստակամություն է հայտնել ծրագրված բարեփոխումների սկզբունքներում արտացոլել սահմանադրական դատարանի որոշումը, ըստ որի՝ առաջարկվում է մեծամասնական ընտրամարզերը բաժանել այնպես, որպեսզի մարզերի միջեւ ընտրողների քանակության տարբերությունը հասցվի նվազագույնի:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*